№ 73 ՇԱԲԱԹ, 5 ԱՊՐԻԼԻ ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ ՇԱԲԱԹ, 5 ԱՊՐԻԼԻ №73

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ԶԱՐԳԱՑՅԱԼ ԾՈՆԾԱՐՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամեն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Ցօղուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Ցօղուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօղուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ՝ կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Յայտարարութիւններն ընդունուում են ամեն լեզուով տողատեղին առաջին երեսում 1 ռուբ., իսկ վերջին երեսում՝ 75 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ գին։ Մահազդի համար 25 ռուբլի։ Յայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունուում են մինչև ժամը 2-ը։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹ.

ապրիլի 1-ից

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՕՐԱԹԵՐԹ-Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ Է.

1 ամիսը . . . . . 18 ռուբ.
3 » . . . . . 50 »
Հասցէն՝ Тифлисъ, Головинскій пр. № 41.

Գրասենեակը բաց է ամեն օր առաւ. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Телефонъ 16—90.

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ"-Ի

գրասենեակը խնդրում է թերթի բաժանորդներին շտապել վերանորոգելու բաժանորդագրութիւնը, հակառակ դէպքում թերթի առաքումը կը դադարեցուի ապրիլի 10-ից։

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. Խորհուրդը յայտնում է, որ այսօր, շաբաթ, առաւօտեան ժամի 12-ին, Մողնու եկեղեցում նշանակուած է

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒԴԱԴԵԱՆԻ

եւ բոլոր միւս հանգուցեալ բարեարարների հոգեհանգիստը։

1—1

Կիրակի, ապրիլի 6-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում, պատարագից յետոյ, ժամը 12-ին, կը կատարուի հոգեհանգիստ Երևանի նահ. Վերին Ազուլիսի զիւղում վախճանուած մեր սիրելի և անմոռանալի հօր՝

Ալէքսանդր Աւետիսեան Տէրեանի

(ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ)

յիշատակին, որի մասին խորին վշտով յայտնում ենք մեր ազգականներին և ծանօթներին վշտահար՝ բժ. Աւետ Ալէքսանեան Տէրեան իր ամուսին՝ Արմենուհու և որդու՝ Շուրայի, Սիմէօն Ալէքսանեան և Արուսեակ Ալէքսանեան Տէրեանների հետ։

Վշտահար Վիրգինիա Ալէքսանդրովնա և Հայկ Գէորգիևիչ Եարվեկեանը իրենց զաւակների հետ խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին, որ կիրակի, ապրիլի 6-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում, պատարագից յետոյ, ժամը 12-ին կատարուելու է հոգեհանգիստ Երևանի նահ. Վերին Ազուլիս զիւղում վախճանուած առաջնի հօր և երկրորդի անուամբ՝

Ալէքսանդր Աւետովիչ Տէրեանի

(ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ) յիշատակին։ 1—1

Համաձայն Հոգևոր Իշխանութեան կարգադրութեան, առաջիկայ կիրակի, ապրելի 6-ին (հին տոմ. փետր. 24 ին) ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում լինելու է

ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎ

հին հոգաբարձութիւնների հաշիւները ընդունելու և նոր հոգաբարձուներ ու անձնափոխանորդներ ընտրելու։ Ներկայ հոգաբարձութեան 1917 և 1918 թ. թ. «Հայաստան» տպագրուած հաշիւ»-ը գտնուում է եկեղեցու ժամկոչի և իւրաքանչիւր քահանայի մօտ, ծխականները նախօրօք կարող են ստանալ և ծանօթանալ։ Յարգանօք խնդրում եմ երկսեռ չափահաս ծխականներին անշուշտ ներկայ լինել ժողովին։

Եկեղեցու երէց՝ Յարութ. քահ. Ճուղուրեան
Երէցփոխ՝ Աբել Ղարխամազեան 2—2

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻ ազիտացիոն կուրսեր

Երկուշաբթի, ապրիլի 7-ին, երեկոյեան ժամը 5-ին, կուսակցութեան բիւրոյում (Դոլովինսկի պր. 41).

ՏԻԳՐԱՆ ՀԱԽՈՒՄԵԱՆԸ

կը խօսի

„Մեր կուսակցութիւնները ապագայ ընտրութիւններում"

Նիւթի մասին։ Մուտքը ազատ է Ուսանողական և Աշակերտական Ֆրակցիաների անդամների համար։ 1—1

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Աշակերտական Ֆրակցիայի ԳԱՏՄԱ-ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿ.

Կիրակի, ապրիլի 6-ին, կուսակցութեան բիւրոյում՝ (Դոլով. 41), կը կայանայ հերթական դասախօսութիւն. կը խօսի՝

պ. Խ. ԿԱՆԱՅԵԱՆ

„Հայոց հարցի վերջին շրջանը"

Նիւթի մասին։ (Շարունակութիւն)

Խնդրւում է Աշակերտական և Ուսանողական Ֆրակցիաների անդամներին և նոյնպէս համակրողներին ու հետաքրքրուողներին ներկայ դրսնուելը։ Սկիզբը ժամը 4 և կէսին։ Դասախօսութիւնից յետոյ տեղի կունենայ Ֆրակցիայի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ, որը քննելու է մի շարք կարևոր հարցեր։ Ժողովը երկրորդը լինելով կը համարուի օրինական։ 3—3

„ԸՆԴՀ. ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ"

Շաբաթ, երեկոյեան ժամը 7-ին, Գոնսերվատորիայի դահլիճում տեղի կունենայ դասախօսութիւն պ. ՍՈՒՐԽԱԹԵԱՆԻ

Համաշխարհային յեղափոխութիւնը եւ մարդկութեան ապագան

Նիւթի մասին։ Թեզերը.—1) Այս յեղափոխութիւնը համաշխարհային, 2) Այս յեղափոխութիւնը սոցիալիստական, 3) Մանր բուրժուազիան իբրև խոչընդոտ համաշխարհ. և սոցիալ. յեղափոխութ.։ ◆ Դասախօսութիւնից յետոյ տեղի կունենան վիճաբանութիւններ, որին կը մասնակցեն կուսակցական հրաւիրուած ներկայացուցիչներ։ 1—1

ՆԱՐՍԻԻ ԲԱՂՆԻՔԸ

(Նախկին Աքովեանի), Փետրուարի 19-ի փողոց, № 6, բացուած է և գործում է ամեն օր առաւօտեան ժամը 6-ից մինչև գիշերուայ ժամը 10-ը, լաւ յարմար և մաքուր համարներով. ընդհանուր՝ թէ տղամարդկանց և կանանց համար։ Թէ համարներում և թէ ընդհանուրներում կան վաննաներ, դուշեր և ցեխ։ Համարների համար աւելորդ ժամանակ չկորցնելու համար ընդունւում են պատուէրներ առաւօտեան ժամը 6-ից մինչև ցերեկ. ժամը 4-ը։

3—1 Յարգանօք՝ Հայկ Ղազարեան

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐԻ ՄԻՈՒԹ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇԷՆՔՈՒՄ

(Դոլովինսկի պր. № 10)

Կազմակերպուած է Միութեան

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Բաց է ամեն օր, առաւօտ. ժամը 11-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը։

Կիրակի Vernissage. 1—1

Կիրակի, ամսիս 13-ին, առաւօտ. ժամը 10-ին, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան թեմական դարանում (Абасъ-Абадская площадь № 7), նշանակուած է ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԻՑ ԿՕՕՊԵՐԱՏԻՎԻ

Տարեկան ընդհանուր ժողովը

Օրակարգի հարցերն են.—1) Վարչութեան զեկուցումն կօօպերատիւի գործունէութեան մասին, 2) Կօօպերատիւի 1917—18 թ. հաշիւների քննութիւնը և հաստատումը. 3) Վերատուչիչ յանձնաժողովի զեկուցումը 1918 թ. հաշիւների մասին, 4) Առաջարկութիւն վարչութեան անդամների թիւը կրճատելու, 5) 1919 թ. նախահաշուի քննութիւնը և հաստատումը, 6) Վերատուչիչ յանձնաժողովի ընտրութիւնը. 7) Ընթացիկ հարցեր։

Մանօք.—Օրինական թուով անդամներ ներկայ չլինելու պատճառով ժողովը յետաձգելու դէպքում՝ երկրորդ ժողովը կը կայանայ նոյն օրը, նոյն տեղը առաւօտեան ժամը 11-ին, ինչ թուով անդամներ էլ ներկայ լինեն։ 1—1 ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Համաձայն մարտի 23-ի ընդհանուր ժողովի որոշման՝ կիրակի, ապրիլի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին Մանթաշեանի Առևտրական դպրոցում (Бебутовская, 50) կը կայանայ ԸՆԴ. ԺՈՂՈՎԸ Օրանենցիների և Արէշցիների կարգը. 1) Հայրենակցական միութեան նոր վարչութեան և վերատուչիչ յանձնաժողովի ընտրութիւն, 2) 2 ներկայացուցիչների ընտրութիւն Արքէջանի պառլամենտի համար, 3) Զեկուցում Նիժի և գաւառի դրութեան մասին, 4) Ընթացիկ հարցեր։

1—1 Պրեզիդիում ընդհանուր ժողովի

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Նախնական խաղաղութեան պայմանագրի ստորագրումը ապրիլի սկզբներին։
Չինաստան եւ Եապոնիա։
Ծովերի բաժանումը։
Զգուշանալ Ռուսիայի հետ միանալու։
Սերմացու Հայաստանի համար։

Շաբաթ օրը, ապրիլի 5-ին, Տիգրան Նազարեանի Գեղարուեստական Սալոնում կարդացուելու է ԱՐՄԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՏԱՂԱՆԴ

դասախօսութիւն։ Խնդրում ենք գրականագէտներին և դերասաններին ներկայ լինել։ Սկիզբն է երեկոյեան ժամը 5-ին։ 1—1

ԲԺԻՇԿ

Խ. ԷՅԷՐՋԵԱՆ

Նախկին ասիստենտ Պարիզի Hotel-Dieu, պրոֆ. Cilbert-ի կլինիկաների, մասնագէտ ներքին հիւանդութիւնների։ Մեթոդիկ բժշկում թոքախտի, սրտի խիստի, բլէվրեթի, պրոնխիթի, անարիւնութեան, լեարդի ուռեցքի, arteriosclerosie-ի (շնչերակների կարծրանալ) առնական անկարողութեան (էմբութագիա) և հին գիտացաւի, կիրարկութիւն ընթերային մասած սրտի հիւանդութեանց համար։ Ընդունելութիւնը առաւօտ. ժամը 10—12, երեկոյեան ժ. 5 8, կիրակի օրերը միայն 10—11։ Հասցէ՝ Միքայէլեան փողոց № 41։ 100—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

Նախկին ասիստենտ Բերլինի եւ Մոսկուայի համալսարանների կլինիկաների։ Մասնագէտ ներքին հիւանդութիւնների—թոքախտի և սրտի. ընդունելութիւնը՝ իր լաբորատորիան և լոյսի ու էլէքտրօթերապեւտիական կաբինետում։ Հետազօտութիւնը և բուժումը X ճառագայթներով։ Ամեն օր, 9—1 և 5—8 ժամը երեկ. Բեհբուտովսկայա փ., № 23։ Հեռ. 7—92։ 100—85

ԲԺՇԿԱՊԵՏ

Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒՐԱՐԵԱՆ

(Նախկին Դորպատ սանատորիայի ասիստենտ)։

Ներքին և երեխայոց հիւանդութիւնների մասնագէտ, թոքերի և սրտի հիւանդ.։ Ընդունելութիւնը ամեն օր երեկոյեան ժամը 5—7-ը։ Սոլոլակ, Դոմիշևսկայա 3, հեռ. 16—69։ (ս. ս.) 100—125

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

Տաս ամիս է, ինչ գոյութիւն ունի մեր նոր Հայաստանը։ Ութ ամսից աւել է, ինչ Թիֆլիսից Երևան է փոխադրուել Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը, որ իր անդամների թիւը հասցրեց 1-ին յայտարարեց Հայաստանի պարլամենտ, նախագահ ընտրելով պ. Ա. Սահակեանին։

Կուսակցութիւնների փոխյարաբերութիւնները այնպէս էր, որ սկզբում կենտրոնը Հ. Յ. Դաշնակցութիւնը իր տարբեր և երբեմն իրար հակասող թեւերով կազմում էր ոչ բացարձակ մեծամասնութիւն, իսկ օպոզիցիան, որի մէջ մըտնում էին «ձախակողմեան» կուսակցութիւնները՝ ս.-դ., և ս.-յ., և «աջակողմը»՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը, Թուրքերի, եզիդիների և ռուսների խումբը՝ կազմում էին փոքրամասնութիւն։ Զբաղնայած այս թուական առաւելութեան, կենտրոնը չկարողացաւ պարլամենտին տոն տալ, անընդունակ եղաւ օրէնսդրական այդ վերին գերիշխան մարմինը օգտագործել թեկուզ իրենց «սոցիալիստական» ծրագրի մի քանի կէտերը իրագործելու կամքի մէջ։ Հայաստանի պարլամենտում Դաշնակցութիւն կուսակցութիւնը ցոյց տուեց իր կատարեալ տհասութիւնն ու անանկութիւնը պետական շրջարար աշխատանքների մէջ։ Նրանց այդ անանկութեան նպաստող պատճառներից մէկն էլ պարլամենտի նախագահի անյաջող ընտրութիւնն էր։

Վերջին շաբաթներս պարլամենտի շուրջը տեղի ունեցան խուր գէպքեր.—նիստերը երկար ժամանակ է չեն կայանում՝ դաշնակցական պատգամաւորների ժողովներին դիտաւորեալ չգալու, նոր ձևի բոլորովին անհեթեթ սարոտաժ ընտեղծելու պատճառով. փետրուարի 28-ին կատարուել են անորակելի բռնութիւններ պարլամենտի փոխնախագահի և պատգամաւորների վերաբերմամբ, այդ տոթիւ իր ժամանակին մեր թերթը իր խօսքը ասաց։

Այժմ առեղծուել է անբնական մի դրութիւն. թէև մենք ունենք պարլամենտ, որ ամեն օր մեր երկրին նստում է մօտ 3 հազար ռուբլի, բայց այդ պարլամենտը չէ կարողանում կատարել իր ֆունկցիաները՝ վերահասու լինելու գործադիր իշխանութեան կատարածին և օրէնսդրական աշխատանքները կատարելուն, վախենալով, որ պարլամենտի ժողովներին կարող են փոքրամասնութիւն կազմել, դաշնակցական պատգամաւորները խզդճի ամենայն հանգստութեամբ շարունակում են իրենց սարոտաժը, բայց և չեն դադարում արնաքամ ժողովրդից օրական 50-ական ռուբլի ստանալը։

Ի՞նչ անուն տալ այս անորակելի յանցագործութեանը դէպի մեր ժողովուրդը։

Պարլամենտի նախագահութիւնը մինչև վերջերս անընդունակ է եղել մինչև իսկ մի նիստ գումարելու, որ կարողանայ զբաղուել մինիստրների խորհրդի մարտի 12-ին քննուած Օրէնսդիր ժողովի օրինագիծը քննելով, որպէսզի տարուս կամ աշնանը կարողանան գումարուել մեր երկրի հարազատ ներկայացուցիչները։

Գրատանում արդէն գումարուել

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 5 ապրիլի

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

—oo—

Անդրկովկասի բոլոր հանրապետությունները համաձայնության են եկել՝ գումարել Թիֆլիսում մի ընդհանուր կոնֆերանս։

Թէ որքան անհրաժեշտ և կարևոր է այդպիսի մի կոնֆերանս, այդ մասին հարիւր թէ հարկ կայ խօսելու։ Մեր հարևոր հանրապետությունները դեռևս այնքան թոյլ ու անկազմակերպ են՝ ամեն մէկն առանձին վերցրած, որ քաղաքական անցողական այս ծանր ու պատասխանատու շրջանում նրանք դժուար թէ հարմանան քիչ թէ շատ յանջող կերպով անօրինել իրենց անհրաժեշտ տնտեսա-քաղաքական վիճակն ու կացությունը և, որ գլխաւորն է, անցնել շինարար, ստեղծագործական աշխատանքների։

Պետական կազմակերպության սկզբնական շրջանը, մանաւանդ երբ այդ կազմակերպությունն ինքն առաջ է եկել անօրինակ սոսկումների և տառապանքների բովից և խլել է բազմաթիւ զոհեր ու տարել է անհամար կենդանի ոյժեր, — պահանջում է, որ յանուն ազատագրուող ժողովուրդների, այդ հարակազմ պետությունները որոշ չափով և զգալիօրէն յենուին իրար վրայ, ինչպէս այդ եղել է անցեալներում, և իրենց մէջ պարփակուած կենդանի ու եռուն ոյժերով նկատելի չափով օգնության գան միմեանց։

Այս գլխաւորն է։

Իսկ այն բազմաթիւ և բազմատեսակ կարեոր ու երկրորդական հարցերն ու խնդիրները, որոնք միշտ առաջ են գալիս պետությունների բաժանման օրերին, սահմանագծերի որոշման միջոցին, նախկին ընդհանուր պետական գոյքերի բաժանման շրջանում. վերջապէս, այն ոչ փոքրաթիւ մանր ու խոշոր հարցերը, որոնք վերաբերում են այդ պետությունների քաղաքական, տնտեսական և կուլտուրական փոխյարաբերություններին, բոլորն էլ պահանջում են յիշեալ պետություններից պարզորոշ կերպով սահմանափակել վիճող և շահագրգռուած կողմերի իրաւունքներն ու պարտականությունները, նրանց սեփականության և տիրապետության հաստատուն սահմանները և վերջապէս նրանց ազդեցության անվիճելի շրջանները։

Մենք խորապէս համոզուած ենք, որ եթէ յիշեալ կոնֆերանսը, որը գումարուելու և սկսելու է իր աշխատանքները Թիֆլիսում ներկայ ապրիլ ամսի 25-ին, եթէ նա գումարուած լինէր անցեալ տարուայ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, դուցէ տեղի չէր ունենայ հայ-վրացական անեծեալ միջնագէպը, դուցէ տեղի չէր ունենայ հայահալածությունն ամօթալի էքսպերիմենտը, դուցէ հնարաւոր կը լինէր օր առաջ կանոնաւորել Հայաստանի տրանսպորտը և հաց ստանալ այդ սովամահ երկրի համար. դուցէ կարելի կը լինէր կանոնաւորել պոստը, հեռագիրը, հաղորդակցությունը, ապրանքների փոխանակությունը, դրամի սուր կարիքը և շատ այլ խնդիրներ, որոնք այսօր այնպէս խեղդում ու ճնշում են ոչ միայն Հայաստանին, այլ և բոլոր միւս հանրապետություններին, որովհետև փաստորէն նրանք էլ արտօնեալ դրության մէջ չեն և դուցէ նոյնչափ կարիք ունեն օգնության, որքան և Հայաստանն ու հայությունը։

Այս բոլորը մեզ հաստատ յոյս է ներշնչում, որ գէթ այս անգամ Անդրկովկասի Հանրապետությունների ներկայացուցիչները կը ժողովուեն միանգամայն լի այն գիտակցությամբ, որ նրանց առաջ դրուած խնդիրները հրատապ են ու անյետաձգելի, որ նրանց վրայ ընկնում է այդ գործի յաջող աւարտման լուրջ պատասխանատուությունը, և որ նրանց բոլորի սեպուհ պարտականությունը պիտի լինի ամեն ջանք գործ դնել՝ այս անընդունելի ու վտանգաւոր դրությունը վերացնել և մեր հանրապետությունների միջև իսկական ու իրական բարեկամությունը վերականգնել ինչ գնով էլ որ լինի։

Ամենքի համար պարզ է, որ այդ նորակազմ հանրապետություններից մի քանիսի համեմատաբար աւելի լաւ ու բաղդաւոր վիճակը քացատրւում է այն հանգամանքով, թէ որչափ հարստությունն էր մնացել այդ պետության սահմաններում ռուս իշխանության վերացման օրից և թէ ինչ աստիճան անցեալներում զարգացած էր այդ շրջաններում պետական ադմինիստրացիան և վարչական իշխանության մեխանիզմը։ Պարզ էր, որ այդ պետությունները գեռևս միջոց և հնարաւորություն չունին շինարար ստեղծագործական աշխատանքներ կատարելու և նրանց պետական յաջողության սկզբնական շրջանը պիտի հիմնուած լինի ինքնցիայի, նախկին կարգերի ու մեխանիզմի աշխատանքների շարունակության վրայ։

Ահա այսպէս էր դրությունը։

Գէտք էր ուրեմն որոնել այն ճանապարհը, որը հնարաւորություն կը տար ազատագրուած և ինքնորոշուած այդ ազգերին այնպէս կարգաւորել իրար փոխյարաբերությունները, որ հնարաւոր լինէր ոյժերի և ջանքերի քիչ գործադրումով հասնել մաքսիմալ հետևանքների և ստանալ հարկաւոր արդիւնքները։

Բայց այդ կարևոր գործը ի կատար չածուեց և, աւելին կասենք, նա միանգամայն խանգարուեց շնորհիւ այն սխալ ու աւանտյուրիստական քաղաքականության, որ վարում էին երեք հանրապետությունների մէջ էլ հաստատուն և ամուր քայլ չդրած անպատասխանատու տարրերը։

Նրանց ազդակոծան և հակապետական «գործունէությունն» շնորհիւ էր, որ մեր փոխյարաբերությունները մեր հարևանների հետ օրաւուր քանի գնացին այնքան փչացան և վերջը մենք կանգնեցինք իսկական կատաստրոֆների առաջ։

Ահա այդտեղից էր, որ քիչ թէ շատ սկսուեց իրերի դրությունը հասկանալու և լրջօրէն դիտակցելու նոր և կարևոր շրջանը։ Ահա այդտեղից էր, որ սկսեց մեր ժողովուրդների հոգեկան ինքնաբացումը և սրա հետևանքով ընդգրկումը այն հատարակ ճշմարտության, որի մասին մենք խոսեցինք մեր յօդուածի սկզբում։

Թէ այնուհետև ինչ շրջանի մէջ մտաւ մեր փոխադարձ յարաբերությունների և համերաշխության գործը—այդ մասին մենք կը խոսենք հետևեալ անգամ։

Տ. Հ.

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

—o—

ՀՆԴԿԱՍՏԱՆ

—

Ռէյտերի հաղորդագրություն. Ի. Վ. Ֆորտիսկին, խոսելով կայսերական ճեմարանում, ընդգծեց այն դերը, որպիսին կատարել է Հնդկաստանի զօրքը վերջին պատերազմում։ Իր ճառում նա ասաց, որ Հնկաստանը տուել է անգնահատելի ծառայություններ։

Նրա զօրքերը ցոյց են տուել քաջության հրաշքներ և նրա զեկավարները տպաւորյցներ են տուել իրենց լոյալության, որի համար մենք պէտք է շնորհակալ լինենք։ Ֆորտիսկին կարծում է, որ Թագաւորն էլ քիչ չէ նպաստել դրան։ Զգալով նրան, որպէսզի ամուր շաղկապի Հնդկաստանը Անգլիայի հետ, Թագաւորը իր Հնդկաստանում գտնուած ժամանակ առաջին երեք շաբաթները ոչ մի բոպէ հանգստություն չունէր և ամբողջ օրը ընդունում էր Հնդկաստանի կառավարիչներին, որոնց միշտ ուրախ էր տեսնելու։ Նրանց հպատակությունը հաստատուում է նրանով, որ նրանք ամենքն էլ ցանկություն յայտնեցին մասնակցել պատերազմին։

ԿՎԷՅԼԻՆԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ

—

Կվէյլինի բրիտանական դեսպանը, որը փորձեր է անում ճնշել ռուսամարբությունը, բռնուեց և կապուեց չինական զինուորներից։ Դեսպանը ազատուած է իշխանության կողմից։ Գնդակահարուած են 15 յանցաւորներ։

ՉԻՆԱԴԱԴԱՐԸ

—

Հաւասի գործակալությունը հաղորդում է, որ ֆրանսիական լրագիրները չեն ծածկում իրենց հիասթափությունը նախնական հաշտարար պայմանագրի զինուորական կէտերի ուշանալու պատճառով։ Նրանք հաղորդում են, որ Ֆոշին առաջարկուած է յետ վերցնել հաշիւը և տուելի պարզաբանել, թէ վերահսկողության որպիսի միջոցները կրում են ժամանակաւոր բնոյթ և որոնք հաստատուում են մշտական։ Ըստ երևույթին, պայմանագրի ծովային կէտերը, մասնաւորապէս գերմանական նաւատորմիղի վիճակի հարցը, ֆրանսիական քաղաքական շրջանների քննադատական վերաբերմունքի պատճառով Անգլիայի առաջարկած գերմանական նաւատորմիղը ոչնչացնելու առթիւ, առաջ են բերել Դաշնակից քննիչների մէջ մի քանի տարաձայնություններ։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

—

Հաւասի գործակալությունը հաղորդում է, որ կոնֆերանսի բոլոր շրջանները մեծ ուշադրությամբ հետևում են Ամերիկայի դեպքերին։ Ժողովուրդների դաշնակցությունը աջողությունը կամ անաջողությունը կախուած է այն պատասխանատվությունից, ինչպիսին ընդգծել է Վիլսոնը Միացեալ Նահանգներում։ Պարիզը զգում է, որ երկու զանազան կիսագնդերի հին հասկացողությունն ընկնում է։ Չնայած այն ձգձգումներին, [illegible]նցից կարելի է խոյս տալ, Դաշնակիցների՝ գերմանական հարցերի վերաբերությամբ ունեցած կարծիքը միաձայն է։

ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՒ ԵԱՊՈՆԻԱՆ

—

Չինական պատգամաւորությունն անդամը յայտնեց, որ Չինաստանը կամենում է ազատություն և իր սահմաններում ազատ զարգացում։ Չինաստանի երիտասարդ սերունդի լաւ զգացմունքները վերաբերուած են, տեսնելով Գեկինում օտար զօրամասեր։ Եապոնիայի պատգամաւորության գլուխը յայտնեց, որ նա յոյս ունի, որ առաջիկայում, շնորհիւ Եապոնիայի օրինական պահանջի ճշմարիտ հասկացողության, որպիսին ապահովում է հեռաւոր արևելքում խաղաղությունն ու քաղաքակրթության զարգացումը, Չինաստանի և Եապոնիայի մէջ կը հաստատուեն լաւ յարաբերություններ։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

Հիմք կայ կարծելու, որ մարտի 15-ին գերագոյն զինուորական խորհրդաժողովության մէջ Դաշնակիցները համաձայնության կը գան զինուորական, ծովային և օդային նախնական հաշտության մասին, որի հիման վրայ էլ գերման պատգամաւորները հնար կունենան ժողովուել Վերսալում մարտի 20-ին և նախնական խաղաղության պայմանները կը ստորագրուեն ապրիլի սկզբներին։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Հաւասի գործակալությունը հաղորդում է.—Ցանկալի է, որ գերման պատգամաւորները համաձայնություն տան դաշնակցության հիմունքներին և հասկանան, որ Գերմանիան կարող է ժողովուրդների դաշնակցության անդամ դառնալ հենց որ նա ապացուցություն տայ խաղաղարար պայմանագրի կատարման համար։ Բոլոր Դաշնակիցները միաձայն որոշել են, որ գերմանական նաւատորմիղը նրան չպէտք է վերադարձնուի, իսկ ինչ վերաբերում է զինուորական պայմաններին, Շարդիէն ասաց, որ Դաշնակիցների միաձայն կարծիքն է, որ այդ պայմանները պէտք է լինեն աւելի խիստ քան նրանք, որպիսին ներկայացրել են զինուորական քննիչները։

ԾՈՎԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

—

Բունաստանը Ադրիատական ծովը ճանաչեց որպէս Իտալական։ Սերբիան բողոք յայտնեց։

ԶԳՏՈՒՄՆ ԴԷՊԻ ՌՈՒՍԱՍՏԱՆ

—

Հունգարիայի Կոշից քաղաքում բացուեցան Ուգրո-ռուսական ռազմական նիստերը։ Նախագահ ընտրուած է Բեսկիդը։ Հունգարիայի [illegible] կայացուցիչներ [illegible] բրից, որոնք ցանկություն յայտնեցին միանալ Ռուսաստանի հետ։

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Ռուսաստանի հայկական խորհուրդը տեղական բժշկական խմբակը կտրուկ միջոցներ են ձեռք առել Հայաստանում համաճարան հիմնելու։

Այս հարցի առթիւ արտասահման է մեկնել պրոֆ. Աղաջանեանը։

ՍԵՐՄԱՑՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

—

Սոչիի ազգային խորհուրդը որոշեց յիշեալ շրջանի գիւղացի ազգաբնակչությունից հաւաքել 5,000 փ. եգիպտացորեն և ուղարկել Հայաստան արտերը ցանելու համար։

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՊԱՐԵՆՈՎ

—

Միացեալ Նահանգները իրենց վրայ են վերցրել պարտաւորություն՝ իւրաքանչիւր ամիս Ռումանիա ուղարկել 20,000 տոն մթերք. Ներկայումս Կոնստանցայում են գտնուում 4 շոգենաւ, իսկ միւս 4-ը՝ 20,000 կենսամթերքներով գտնուում են ճանապարհին դէպի Կոնստանց։

ԽԷՅԳԸ ԻՐ ՆԱԽԿԻՆ ՊԱՇՏՕՆՈՒՄ

—

Հաղորդում են, որ Բրիտանական հրամանատարի նախկին պաշտօնը վերականգնուում է և Խէյգը մտնում է այդ պաշտօնի մէջ։

ՀԵՔԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

—o—

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Հրէական հարցը

Մարտի 30-ին տեղի ունեցաւ խաղաղաբար բանակցությունների արտաքին գործերի առանձին դեպարտամենտի նիստը հրէական հարցի մասին։ Հրէական գործերի քննիչ յանձնաժողովը առաջարկեց ընդունել հետևեալը.—հաւասար, միատեսակ վերաբերմունք դէպի հրէաները և ընդհանրապէս բոլոր աշխարհի երկրների հրէությունը, նոր կազմուած պետությունների մէջ ազգային և կուլտուրական աւտոնոմիա այն չափով, ինչ չափով այդ կը ցանկանան այնտեղ ապրող հրէաների մեծամասնությունը և գերազանցի քաղաքական, վարչական և տնտեսական պայմանների ստեղծումն, որպէսզի նրա զարգացումը, ինչպէս աւտոնոմ պետություն, պաշտպանուի և ապահովուի ամբողջ հրէության կողմից։

Դանցիգի առթիւ

Լեհական զօրքերի բանի ոտ իջնելը Դանցիգում, ինչպէս սպառնում է «Թանը», կ'ոչնչացնէր Դաշնակիցների այն խաղաղ աշխատանքները, որպիսին նրանք ունին Գերմանիայի աշխատակցության վերաբերությամբ։

Լեհական զօրքերի Դանցիգ մտնելը, առանց Գերմանիայի համաձայնության և առանց գերմանական սուվերէն իրաւունքների անձեռնմխելիության երաշխաւորության, կը համարուի ֆրանսիական տիրապետական ծրագիրների լայն նշան, և այդ Գերմանիայի համար հաւասար կը լինէր որպէս թշնամական մի գործողություն։

Ժորեսին սպանող յանցաւորի մասին

Ժորեսի սպանողին ազատ արձակելը, որպիսին գովաբանուում էր գերմանական սոցիալական մամուլի կողմից, ցոյց է տալիս թէ Ֆրանսիան ներկայումս ինչին է ընդունակ և թէ ոչ գերմանական դեմոկրատիան, ոչ գերմանական սոցիալիզմը չեն մտնում խարուսիկ դրության մէջ այն ճշմարտության վերաբերությամբ, որպիսին ներկայումս ստացուած է Պարիզում։

—

Ֆրանսիան հրաժարւում է կատարել իր պարտաւորությունները

Ռայլ՝ Բերլինից Նիւ-Յորկ ամերիկական կարմիր Խաչին։ Համաձայն կայացած համաձայնության, Ֆրանսիան պարտաւոր է շտապ հաղորդել Գերմանիային նրա ձեռքը ընկած ռազմագերիների անունները և հնարաւորություն տալ նրանց հաղորդել իրենց ազգականներին և կանոնաւոր երթևեկություն բանալ նրանց հետ։ Այդ պարտաւորությունները Ֆրանսիան չէ կատարում։ Դեռ սեպտեմբերին գերմանական ռազմագերիները (մօտ 100,000) ցուցակագրուած չեն։ Ազգականները տակաւին նրանցից ոչ մի տեղեկություն չեն ստացել։ Վերջինները շատ անհանգիստ են և հնարաւորություն չունեն թեթևացնել իրենց թանկագին անձնաւորությունների թշուառ բաղդը։ Ժողովրդական զինուորական և քաղաքացիական գերիների ամուսինը թախանձագին խնդրում է կարմիր Խաչին՝ խիստ միջոցներով ազդել Ֆրանսիայի վրայ, որպէսզի նա իր պարտաւորությունները կատարէ։

—

Վնասների հատուցումը Գերմանիայի կողմից

ՊԱՐԻԶ, 2 ապրիլի.—Այն գումարը, որպիսին Գերմանիան պարտաւոր է տալ Ֆրանսիայի փոխարէն,

խաղաղարար կոնֆերանսու ամուր կերպով չի հաստատուի։ Նրա որոշումը ամբողջովին կը յանձնուի յանձնաժողովի հայեցողութեան։ Այդ որոշումը հաւանութիւն գտաւ Անգլիայի և Ֆրանսիայի կողմից և ընդունելի կը լինի Գերմանիայի կողմից։

—

Գալիցիայում կռիւները շարունակւում են

ԺՄԵՐԻՆԿԱ, 2 ապրիլի.—Գալիցիայում լեհացիների և ուկրաինացիների մէջ տեղի ունեն յաժառ կռիւներ։ Գերի բոլորովին չեն վերցնում։ Տարնոպոլ են գալիս ամեն օր ռեզիկների նոր էշելոններ։ Ռումինական իշխանութիւնը հրաման արձակեց, որով արգելւում է նահանջող պետլիուռովցիներին մտնել Բեսարաբիայի սահմանները, որի պատճառով Վիրզուլիի մէջ գտնուող պետլիուրովցիների մի մասը մնացել է անյուսալի դրութեան մէջ։

—

Բոլշեւիկական յակումն

ՎԱՐՇԱՒԱ, 28 մարտի.— Դոմբրովի ժողովրդական միլիցիան բոլշեւիկական յակումն ունի և մերժեց կառավարութեանը հպատակուել։ Ցեղափոխական զինուորներն ու միլիցիոներները սաստիկ ցեծուցին։ Նորը պատահեց նաև Սոսնովեցում և Բենգինում։

—

Անկարգութիւններ Ֆրանկֆուրտում

ՆԱՈՒԷՆ, 24 մարտի.— Ֆրանկֆուրտում Մայնի վրայ սուր պարենաւորման պատճառով անկարգութիւններ ծագեցին։ Ցոյցերի ժամանակ ընդհարումներ տեղի ունեցան կառավարական զօրքերի հետ։ Կան սպանուածներ։ Ամբոխը բանտարկեց, արձակեց բանտարկեալներին և կողոպտեց շատ մթերանոցի խանութներ։

—

Փողոցային կռիւներ Շտուտգարդում

ՆԱՈՒԷՆ, 2 ապրիլի.—Երէկ Շտուտգարդում գործադուլ և ցոյց անող բանուորների և կառավարական զօրքերի մէջ տեղի ունեցան փողոցային կռիւներ։ Շտուտգարդի գործադուլային կոմիտէն յայտարարեց համայնական գործադուլ բոլոր Վիւրտենբերգում։

—

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ՊԱՐԻԶ. Այն յանձնաժողովը, որին յանձնարարուած էր միջոցներ գտնել միացեալ միջազգային աշխատանքների պայմանները մշակելու համար, վերջացրեց իր աշխատանքները։ Այն որոշումները, որոնք շուտով կը ներկայացուին կոնֆերանսի միացեալ նիստին՝ երկու ձեւի է արտայայտուած։ Նախ մշակուած է միջազգային աշխատանքի օրէնսդիր կազմակերպութեան համաձայնութեան ծրագիրը, որպիսին կազմուած կը լինի չեզոք պետութիւնների ներկայացուցիչներից, ժողովուրդների գաղնակցութիւնից և միջազգային աշխատանքի բիւրոյից վարչական խորհրդի կառավարութեան տակ։ Երկրորդ մասը կազմուած է մի շարք յօդուածներից, որոնք կազմուած են դեկլարացիաների հիմունքներից և որոնք ներկայացնում են մեծ հետաքրքրութիւն աշխատաւոր աշխարհի էական հարցերի վերաբերութեամբ։ Ահա այդ յօդուածների ընդարձերը, որպիսին կցուած է խաղաղարար պայմաններին.— Պայմանաւորուող գլխաւոր կողմերը համաձայնւում են ընդունել այդ հիմունքները և պարտաւորւում են կեանքի մէջ անցկացնել համաձայն համաշխարհային կոնֆերանսի և աշխատանքի ցուցմունքների։ 1) Ոչ իրաւաբանօրէն, ոչ փաստօրէն և ոչ մի ձեւով մարդկային անձնաւորութիւնը չպէտք է հաւասարուի առևտրական յօդուածների ոչ մի հասկացողութեան հետ։ 2) Ասոցիացիայի և կօալիցիայի իրաւունքը պէտք է յանձնուի ամեն դէպքում ծառայողներին և բանուորներին, երբ հակառակ չեն օրէնքին։ 3) Ոչ մի երեխայ, որը չէ հասել 14 տարեկան հասակի, չպէտք է թոյլ տրուի աշխատելու արդիւնաբերական կամ առևտրական ձեռնարկութիւնների մէջ։ Այդպիսով նրան արւում է միջոց զարգանալու և կրթութիւն ստանալու։ 4) 14 մինչ 18 տարեկան հասակի երիտասարդները և աղջիկները կարող են աշխատել իրենց ֆիզիքական զարգացման համեմատ այն պայմանով, երբ նրանց կրթութիւնը ապահովուած լինի։ 5) Իւրաքանչիւր բանուոր իրաւունք ունի սահմանել իր գոյութիւնը ապահովող ռոճիկ, համաձայն իր երկրի կուլտուրայի և կեանքի։ 6) Աշխատավարձը միատեսակ է առանց սեռի խտրութեան, միատեսակ ըստ յատկութեան և ըստ քանակութեան։ 7) Բոլոր բանուորների համար պարտադիր է կիրակուայ հանգստութիւնը, իսկ անհնարին դէպքում—նրա փոխարէն ուրիշ օր։ 8) Սահմանափակումն աշխատանքի ժամանակի արդիւնաբերական հիմնարկութիւնների մէջ օրական 8 ժամ կամ շաբաթական 48 ժամ, բացառութեամբ այն երկիրների, ուր կլիմայական յատուկ պայմանները էական տարբերութիւն ունեն աշխատանքի արտադրութեան վերաբերութեամբ։

Այդ երկիրների աշխատանքի հիմունքների մշակումը յանձն է առնում աշխատանքի միջազգային կոնֆերանսը... (եղծուած) 9) Բոլոր պետութիւնները պէտք է կազմակերպեն աշխատանքի վերատեսչական ծառայութիւն, վերահսկելու բանուորների ապահովութեան վերաբերեալ օրէնքներին և կանոններին։ Այդ ծառայութեան մէջ կարող են մտնել նաև կանայք։

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Այսօրուայ ասնի պատճառով «Ժողովրդի Ձայն»-ի հետևեալ հատորը լոյս կը տեսնի երեքշաբթի, ապրիլի 8-ին։

◆ Վրաց փոխադրական ընկ.— Թիֆլիսում հիմնուել է վրաց փոխադրական ընկերութիւն 12 միլիոն դրամագլխով։ Ապրիլի 8-ին կայացաւ հիմնադիրների գագտակերպչական ժողովը։

◆ Քաղաքային ծառայողների ոռճումը.—Ապրիլի 3-ին ժողովրդական հաւալսարանում կայացաւ քաղաքային ծառայողների պատգամաւորական ժողովը, որին ներկայ էին քաղաքագլուխ Բ. Զիսկիլիշիլին և փոխանորդ Ղոնիեը։ Քաղաքագլուխը յայտնել է, որ քաղաքային վարչութիւնը ամեն կերպ աշխատում է ազատուել դեմոկրատիկ հիմնարկութեան մէջ գործադուլ անողներից, որի համար նա յայտնեց թէ, գործադուլաւորներից քչերն են պաշտօն ստանալու համար թնդիր ներկայացրել, իսկ նոր խնգրատուների թիւը հասնում է 150-ի, որոնց ընդունելուց յետոյ այլևս ծառայողների կարիք չի զգացուի։ Հիմնուելով քաղաք. գում. որոշման վրայ քաղաքագլուխ յայտնեց, որ այն ծառայողները, որոնք եթէ մինչև ապրիլի 8-ի ցերեկուայ ժամը 3-ը նորից պաշտօնի մէջ մտնելու համար թնդիր չեն ներկայացնի կը համարուին հեռացըրուած, իսկ հատանելի գումարները կը տրուեն ծառայողներին, որոնք լիկւիդացիոն չեն ստանայ։ Իսկ ժողովականների հարցին քաղաքագլուխը պատասխանեց, որ ձերբակալուածներից միայն երեքը եղել են քաղաքագլխի կարգադրութեամբ, որովհետև նրանք սպառնացել են աշխատող ծառայողներին և կասեցել աշխատանքի խանգարումն առաջ բերել քաղաքային ինքնավարութեան մէջ։ Ժողովականների բարձրացրած աղմուկի միջոցին քաղաքագլուխը և նրա օգնականը հեռացան նիստից, որից յետոյ պատգամաւորական ժողովը քննելով ստեղծուած դրութիւնը՝ որոշեց աշխատանքները վերսկսել այն պայմանով, որ անմիջապէս ազատուեն բանտարկուած գործադուլաւորները և ընդունուեն բոլոր ծառայողները իրենց նախկին տեղերում։ Այս որոշումը կայացրուեց նկատի ունենալով, որ քաղաքային վարչութիւնը արդէն սկսել է բաւարարել ծառայողների պահանջները։

◆ Գարոցական հանդէս.—Գաղը 4-րդ գիմնազիայում տեղի է ունենալու հանդէս Յովհ. Թումանեանի պատուին, նրա ծննդեան 50-ամեակի առթիւ։

◆ Արհեստակցական միութիւն.— Թիֆլիսում կազմուել է բեռնակիրների և կառապանների արհեստակցական միութիւն, որի կանոնադրութիւնը վաւերացրուած է կառավարութեան կողմից։ Միութիւնն ունի 1000-ից աւելի անդամներ։

◆ Ժողով.—Վաղը, առաւօտ. ժամը 12-ին Կրուժոկում նշանակուած է Հայ Ուսանող. Կուլ. Միութեան անդամների արտակարգ ընդհանուր ժողովը, ուր ուսանողների պատուիրակութիւնը զեկուցում է տալու հայ ուսանողութեան արտասահման մեկնելու խնդրի մասին։

◆ Ֆողուիթիւն.—Մարտի 4-ի գիշերը անյայտ չարագործներ Ժուբրեի բնակարանից գողացել են 10,000 ռ. զանազան իրեր և անյայտացել։

◆ Գրպանահատ Լեժաւան.—Թիֆլիս կայարանում ձերբակալուել է գրպանահատ Ալ. Լեժաւան, որը մարտի 31-ին կայարանում մի անցորդի գրպանից հանել էր 7000 ռ.։ Գումարը յանձնուել է ըստ պատկանելոյն, իսկ Լեժաւան դատի է մատնուած։

◆ Մեսաղ Հայաստանի համար.— Հայաստանի դիւանագիտական միսիան Վրաստանում միջնորդել է վրաց կառավարութեան առջև, որ թոյլ տրուի Թիֆլիսի արսենալում և մետաղագործարաններում ձեռք բերել հարկաւոր քանակութեամբ մետաղ և գործիքներ և ուղարկել Հայաստան՝ գնացքների վերանորոգութեան համար։

◆ Սերմացու գաղթականների համար.—Գաղթականական կոմիտէի նախագահ Զիլուաթէն երկրագործութեան մինիստրութեան առջև միջնորդութիւն է յարուցել, որ սերմացու և գիւղատնտեսական գործիքներ տրուեն Ախալքալաքի և Ախալցխայի գաւառների գաղթականների համար։ Միջնորդութիւնը երկրագործութեան մինիստրը յարգել է և արել համապատասխան կարգադրութիւն։

◆ Երկաթուղային ուղղակի հաղորդակցութիւն.— Ադրբէջանի և Վրաստանի կառավարութեան միջև կայացրած համաձայնութեամբ ապրիլի 3-ից հատատուել են երկաթուղային ուղղակի հաղորդակցութիւն Բագու-Թիֆլիս Քութայիս Փոթի։

◆ Դուշեթի ապստամբութեան գործը.—Մօտ ապագայում Թիֆլիսի արտակարգ դատարանում քննուելու է Դուշեթի ապստամբութեան գործը։ Ի միջի այլոց դատուելու են ապստամբների պարագլուխներ՝ Բ. Մախարաձէն և Ս. Գիզեչկորին։

◆ Զեմ խեւսուրներին.—Խեւսուրների ներկայացուցիչների միջնորդութեան հաւաձայն, քիսթիների և լեզգիների յարձակումներից պաշտպանուելու համար՝ վրաց կառավարութիւնը կարգադրել է խեւսուրների ներկայացուցչութեանը տրուի պահանջած քանակութեամբ հրացան և փամփուշտ։

◆ Գործադուլաւորներից անջատուածներ. — Քաղաքային հիւանդանոցներում վերսկսուած է երթևեկ հիւանդների ընդունելութիւնը, որովհետև հիւանդանոցների ծառայողները անջատուելով գործադուլաւորներից անցել են աշխատանքների։ Հիւանդանոցներին կից գտնուող դեղատների ծառայողները գործադուլը շարունակում են, հետևապէս դեղեր չեն տրւում քաղաքային հիւանդանոցներից։

◆ Թիֆլիսի քաղաքային ծառայողների գործադուլի շուրջը.—Ոչ գործադուլաւոր քաղաքային ծառայողներից կազմուած արհեստակցական միութեան բիւրոն գիմել է քաղաքային վարչութեանը և խնդրել՝ համապատասխան կարգադրութիւն անել, որ նախկին արհեստակցական միութեանը պատկանող գումարները և գոյքը, որ գտնուում է քաղաքային գանձարանում և քաղաքային ինքնավարութեան շէնքում, չտրուեն նրան։

— Քաղաքային վարչութիւնը որոշել է չազատացնել ինքնավարութիւնը և նոր ու նախկին ծառայողներին ընդունել նրանցից չը պահանջելով վրացագիտութիւն։

— Քաղաքային ախտահանական ճիւղի բոլոր ծառայողները անջատուելով գործադուլաւորներից, վերսկսել են աշխատանքները։

◆ Ռոճկի յաւելում.— Քաղաքային դեղատների ծառայողները պահանջել են ռոճկի յաւելում 100 տոկոս, դարձնելով ռոճիկները ամսական 1500 ռ.։

◆ Սպանդանոցի ծախսերը ծածկելու համար.—Թիլիսի քաղաքային վարչութիւնը նկատի ունենալով, որ քաղաքային սպանդանոցը չի ծածկում նոյնիսկ իր ծախսերը, որոշել է կենդանիների մորթելու գինը աւելացնել՝ նշանակելով գոմէշին 18 ռ., կովին, եզին և հորթին 9 ռ., խոզին 6 ռ. 50 կ. և ոչխարին՝ 3 ռ.։

◆ Նահանգական բաստիոնը լեռ կանչուած.—Կառավարութեան կարգադրութեամբ Բորժոմի շրջանում գործող նահանգական բատալիոնի զօրամասը յետ է կանչուել Թիֆլիս։

◆ Վրաց հոգեւոր համերգ.— Երաժշտագէտ Ա. Ի. Արակչիևը վերջացրել է վրաց պատարագի նոր երգեցողութեան աշխատանքները։ Մօտ ժամանակներում տրուելու է առաջին վրաց հոգեւոր համերգը։

◆ Զուրբ.—Շիր չլինելու պատճառով վերջին ժամանակներս քաղաքային ջրմուղի ջուրը ստացւում է պղտոր, համարեա թէ չզտած. այս պատճառով որոշուած ջուրը տրւում է զանազան ընդհատումներով, որպէսզի հնարաւոր լինի պղտոր ջրի պատճառած կեղտը մաքրել մեքենաներից։

◆ Շերամի սերմ.—Երկրագործութեան մինիստրութեան յանձնարարութեամբ Բուքայիսի շերամագործական կայարանի կառավարիչ Բուքաթելաձէն մասնաւոր ֆիրմաներում ձեռք է բերել բաւականաչափ շերամի սերմ, որոնք ուղարկուելու են շերամագործական շրջանները՝ ձեռնտու պայմաններով աղգաբնակութեանը բաժանելու համար։

◆ Փակուած թերթ.—«Тифлисскій Листокъ» թերթը նախկին հրատարակչական ընկ. անցնելով նոր հրատարակչական ընկ. դադարից, որովհետև տպարանի բանուորները պահանջել էին տալ լիկւիդացիոն երկրորդ անդամ։ Նոր հրատարակչական ընկ. թերթը փակելով, բաժանորդներին սկսել է վերադարձնել բաժանորդագինը։

◆ «Сѣверный Кавказъ»-ը փակուած.—Լեռնցիների կառավարութեան կարգադրութեամբ փակուեց Թիֆլիսում հրատարակուող «Сѣверный Кавказъ» թերթը, որ հրատարակւում էր լեռնցիների կառավարութեան միջոցներով։

◆ Հասարակական ակումբ.— Այսօր, ժամը 7-ին, Անդրկովկասի համալսարանում (Գոլովինսկիյ, 10) կը կայանայ Հասարակական Ակումբի բացումը։ Սկզբում կը կարդացուի ակումբի գործունէութեան հաշիւը և կը կայանայ վերատուեալ յանձնաժողովի ընտրութիւնը, իսկ յետոյ կը լինի Մ. Դ. Եասարերովի դասախօսութիւնը՝ Արևելեան Եւրոպայի ապագայի խնդիրը։

◆ Ուսանողական Դրամատիկ Ընկերութիւնը.—Մօտ ապագայում Հայ Ուսանողա-Աշակերտական Դրամատիկ Ընկերութիւնը, սեղանի բացման առթիւ, մեծ պատրաստութեամբ, բեմիսօրութեամբ պ. Ամոխարդեանի տալու է մի հանդիսաւոր ներկայացում. դրուելու է, առաջին անգամ հայ բեմի վրայ, փոխադրութեամբ Wargano Lantè-ի Պուշկինի՝ «Ժլատ Ասպետ» տրագիկոմեդիան 3 պատկեր. և «Բաղդատ Աղբար» Յ. Պարոնեանի։

◆ Ժողով. — Կիրակի, ապրիլի 6-ին, առաւօտեան ժամը 10-ին Մանթաշեանի Առևտրական դպրոցում (Бебутовская 50) կը կայանայ նուխեցիների և արէշցիների ընդհանուր ժողով։ Խնդրում ենք հայրենակիցներին ներկայ լինել։

◆ Դասախօսութիւն.— Կիրակի, ապրիլի 6-ին, առաւօտեան ժամը ճիշտ 10-ին, Յովնանեան դպրոցի դահլիճում տեղի կունենայ Մանկավարժական Մբաւկի հերթական դասախօսութիւնը։ Կը խօսէ պ. Գ. Էդիլեանը «Կուլտուրական կրթութիւն» նիւթի մասին։

ԹԻՖԼԻՍԻ ԲՈՐՍԱՆ

4 ապրիլի

Ռուս. վալիւտայի գները այսօր հետեւեալն էին՝ 100 ռուբլիանոցները ծախւում էին մինչև 103 տոկոս յաւելումով, 500 ռուբլիանոցները 100 տոկոսով և մանր «Նիկոլաևսկի» դրամագլխերը 40—45 տոկոս յաւելումով։ «Կերենսկու» փողերը շրջանառութիւն ունէին՝ 1000 ռուբլիանոցները մինչև 30 տոկոս յաւելումով, 250 ռուբլիանոցները՝ 25 տոկոսով և 40 ու 20 ռուբլիանոցները՝ 9—10 տոկոս յաւելումով։

Թանգ են գնահատւում անգլիական ֆունտ ստերլինգները՝ բանկնոտները մօտ 135 ռ., չեկերը 120 ռ.։ Բարձրանում են և տաճկական ոսկի լիրաները, որոնց համար վճարում են 165 ռ. և աւելի։ Չեկերի փոխանակութեան համար պահանջում են 20 տոկոս։ Տոկոսաբեր թղթերից շրջանառութիւն ունեն Թիֆլիսի Քաղաքային Վարկային ընկ. օբլիգացիաները 133 ռ., ժամանակաւոր անդորրագրերը 103 ռուբլի։

Դիւիդենտ թղթերի դրութիւնն անփոփոխ է։

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՐՍԻ ՄԱՇՄԵԴԱԿԱՆՆԵՐԸ

Կարսի նահանգի հայ գաղթականութիւնը այժմ միանգամայն համոզուած լինելով, որ մօտեցել է ժամանակը վերադառնալու իր ծննդավայրը, վերաշինելու և էլի առաջուայ նման ծխացնելու իր օջախը, սկսել է մտածել տեղական մահմեդական ազգաբնակութեան գաղթելու և մնալու մասին։

Հիմա թէ քաղաքում և թէ մօտակայ գիւղում, ուր տեղաւորուած է գաղթականութիւնը, խօսւում և քննադատւում է այդ հարցը։ Ընթերցողներից շատերին կարելի է թէ զարմանալի լինի, թէ ինչու Կարսի նահանգի հայութիւնը թողած իր անհամար ցաւերը, սկսել է միտք պարապեցնել տեղական մահմեդականների մասին։ Նախ քան այդ հարցին բացատրութիւն տալը, սկսենք անցեալից։ Երբ Կարսի նահանգը 1877 թուին վերջնականապէս անցաւ ռուսաց ձեռքը, այդտեղ բնակութիւն հաստատեցին և առաջին տեղը բռնեցին հայերը։ Սկզբի տարիներում տեղական մահմեդականներից շատերը խարուելով իրենց կրօնամոլ մոլլաների քարոզներից, գաղթեցին Տաճկաստան, իրենց հետ տանելով անագին կարողութիւն, յուսալով, որ այնտեղ աւելի հանգիստ կապրեն և մեռնելուց յետոյ Մահմեդի խոստացեալ դրախտը կը դնան. բայց երկու կամ երեք տարուց յետոյ նորից վերադարձան բոլորովին աղքատացած և տեղաւորուեցին էլի իրենց առաջուայ գիւղերում կամ քաղաքներում։ Այդ փորձը արին և ուրիշ մահմեդականներ, բայց դարձեալ կրկնուեց նոյն տխրագրանը։ Պարզ հասկացան, որ իրենց բարբարոս տաճիկ կառավարութիւնը թալանող է, կաշառակեր է և աշխարհի մէջ եղած բոլոր պակասութիւններով օժտուած է. դրա համար էլ այդ կառավարութեան մէջ չի կարելի հարուստ և պատուով ապրել։ Ահա այս փորձերից յետոյ մահմեդականները խելքի եկան, սկսեցին մօտենալ հայերին և նրանցից ամեն մէկը աշխատեց իր համար քիրւայ, գոստ և բարեկամ ճարել ամեն խաւի հայերից թէ քաղաքներում և թէ գիւղերում։ Հայերի համար ուրախալի էր, որ մահմեդականները հասկացան իրենց սխալը և իրենք էլ սկսեցին մօտենալ նրանց, այնպէս որ վերջին տարիներում եթէ մանէիք Թուրքի կամ քիւրդի գիւղ, անշուշտ կը տեսնէիք հայ խանութպան, հայ արհեստաւոր և հայ կաթնատնտես։ Զմեռ ժամանակ եթէ հիւր լինէիք այդ գիւղերում, կըտեսնէիք որ մարդիկ հաւաքուած ախոռի յողարերում զրոյց են անում և նրանցից ամեն մէկը գովաբանում է իր հայ քիրւային և պարծենում նրա կարողութիւնով և լաւ կոմիերով։ Երկու կողմի քիրւաներն էլ լաւ ճանաչում էին իրենց պարտականութիւնները և կատարում էին մէկը միւսի առաջարկութիւնը կամ խնդիրը։ Այսպիսով մահմեդականը շփուելով հայի հետ կամացկամաց ընդունում էր նրա սովորութիւններից, մինչև անգամ մահմեդական քիրւայի կինը, թոյլատրութիւն էր ստացել իր ամուսնուց մօտենալ, ձեռք բռնել և բարեւել իր հայ քիրւային։ Այս տեսակ քիրւայութիւնը աւելի տարածուած էր գիւղերում և հարկաւոր եղած դէպքում, քիրւաները օգնում էին իրար սերմացու, եզ, կով, ոչխար տալով։ Ամենայն դէպքում Կարսի նահանգի հայ գաղթականութիւնը, զրկուած մշակներից, ելնելով դատարկաձեռն վերադառնալու է իր տեղը և յոյս ունի, որ իրեն թալանող քիրւան այժմ զղջացած կը լինի և չի խնայի ձեռք բռնել իր էրմէնի քիրւային, որով հնարաւորութիւն կունենայ ապրելու և պահելու իրա գոյութիւնը, մինչև երկրում կարգ ու կանոն հաստատուելը։ Ահա թէ ինչու վերջին օրերում հայ գաղթականութեան մէջ ուժեղ կերպով քննադատւում է ժամանակաւորների գաղթելու և մնալու հարցը։

Դժուար է ասել թէ ինչպէս կը լինի, բայց այդ էլ մի յոյս է և կը պարզուի շատ մօտ ապագայում։

Հ. Մուրազեանց

ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԻՍՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Համաշխարհային պատերազմի սրկաւիրքների սոսկալի հարուածը ուժգին կերպով թափահարեց հանուր հայութիւնը և այն ժամանակ, երբ Կովկասի բոլոր մասը քրիստոնեայ ազգերի ինքնորոշման խնդիրն էր հրապարակ դրուած, հայ ազգը կուռ դաշտում, մեն-մենակ մաքառեց իրենից հարիւրապատիկ զօրեղ թշնամու դէմ և՝ շրջապատուած ընդհանուր թշնամիներով՝ սարսռուեց տեղի տալ թեթև յեռոյ դիմադրելու համար՝ իր գլխաւոր թշնամուն։

Բոլորն ապաքինցուցիչ էր։ Հայութիւնը հարիւրաւոր տարիների ընթացքում մաքառել և տուժել էր տաճկի հարուածից։ Այս անգամ թշնամին ներս էր մտել նրա սիրտը և առաջ էր գալիս՝ իր անցած ճանապարհին ամեն ինչ հրոյ և սրի ճարակ դարձնելով։ Լքուն էր առաջացել պատերազմի ճակատում, լքուն հայութեան ներսում, լքուն նաև հարեան Վրաստանում։ Հայի թշնամին մէկ չէր, ամեն կողմից հարուած, ամեն կողմից հալածանք։

Եւ այն բոլորին, երբ տարագիր հայութիւնը ապաստարան էր որոնում Վրաստանի քաղաքներում և գիւղերում, նոյն բոլորին նրա դէմքաւոր թշնամին, թիւրքաց կանոնաւոր զօրքը խուժանի հետ միացած, մօտենում էր Թիֆլիսի պատերին։ Ինչ պէտք էր անել։ Ենթարկուել ճակատագրի կամքին, թէ փախչել՝ ազատուելու համար նախատեսնուող վտանգից։ Ահաբեկուած ժողովուրդը վերջին միջոցը ընտրեց և իր տուն ու տեղը, կայքն ու կարողութիւնը բաղդի կամքին թողած՝ երեսը ուղղեց դէպի հիւսիս և խուճապային ձեւով սկսեց առաջ շարժուել։

Մեր ընթերցողներից նրանք, որոնք կդիտեն Մայիսեան չարաբաստ օրերը, թող թարմացնեն իրենց յիշողութեան մէջ այնասկսալի պատկերը, որին ենթարկուեց հայ ժողովուրդը։ Նա անտէր էր, առանց առաջնորդի և խորհրդատուի։ Նա բռնել էր Ռազմավիրական ճանապարհը և Իսրայէլացիների նման գնում էր դէպի իր երազած «Աւետեաց երկիրը»...

Ինձ համար երբէք այնքան ամօթալի և փոքր չէին երևացել մեր ազգային հաստատութիւնները և մանաւանդ Հայոց Ազգային Խորհուրդը, քան այդ օրերին։ Նա այնքան թոյլ էր, այնքան անշնորհ՝ որ ոչ միայն առաջը չէր առնում կատարուող տրագեդիային, այլ և իր նախագահի և անդամների բերանով խրախուսում էր իրեն դիմող յուսարեկ հայերին՝ զլուխներն առնել ու փախչել...

Երևանեան հրապարակից սկսած մինչև Սաբուրթալո կամուրջ, ֆուրգոններ և հեծեան փախստականութիւնն էր։

Ես դժգոհութիւն ունէի մասնակից լինելու փախչող հայութեան առատպանդներին։ Մայիսի 22-ից 26-ը շատ արտասուքներ ենք քաշել՝ Ռազմավիրական ճանապարհի երեք թեռնելով։ Հինգ տարեկան քաղաքի երեխաները բոբիկ ոտքերով վազում էին ծնողների հետից՝ յաճախ օդը թնդացնելով իրենց աղեկտուր լացով ու աղաղակներով...

Թիֆլիսից դուրս գալու միջոցին յայտնեցին, որ Հայոց Ազգային Խորհուրդը հաստատութեան է եկել Թերեքի կառավարութեան և Ինգուշների Ազգային Խորհրդի հետ հայ փախստականութեանը ազատ և անվտանգ ճանապարհ տալու համար, սակայն Ազգային Խորհուրդը, ինչպէս իր բոլոր գործերում, նոյնպէս և այս գործում, չափազանց անվարձ և անշնորհ դուրս

եկաւ և երբ փախստականութիւնը հասաւ կաղքէկ, Դարեալի ճանապարհը իր առաջ փակուած գտաւ և ստիպուեց հինգ օր շարունակ յետ ու առաջ գնալ, մինչև որ Թերեքի կառավարութեան կարգադրութեամբ կիրճը բացուեց։

Հրապարակ եկան սև ազգաւորները նախ փախստականութեան, ապա և ինքնուշների մէջ։ Իրենց ազգային խորհրդի կողմից լիազօրուած անուանող մի քանի պարոններ բացարձակ սակարգութեան մէջ մտան մոլորուած փախստականների հետ և որոշ գումարներ ստանալու պայմանով խոստացան անվտանգ անցկացնել մինչև Վլադիկաւկազ և բացարձակ Թալանեցին ամենքին։

Անտէր և անտիրական փախստականութեանը կատարեալ Թալանի և անաբեկման ենթարկեցին նաև, ինքնուշները, և երբ փախստականութիւնը մի կերպ իրեն հասցրեց Վլադիկաւկազ, միլիոնների հասնող գումարներ և իրեր՝ արդէն ձեռքից դուրս էր եկել։

Ռազմաւիրական ճանապարհին, այդքան թշնամանքների և հալածանքների մէջ եթէ մի մխիթարական կէտ կայ յիշելու, դա էլ ընդհանրապէս վրացիների մարդասիրական վերաբերմունքն էր, որ մենք պարտաւոր ենք խոստովանել անկեղծօրէն։

Հասնելով Վլադիկաւկազ, մենք լսեցինք, որ այնտեղ գոյութիւն ունի Հայոց Ազգային Խորհրդի ճիւղ և փախստականութեան գործը նա իր ձեռքն է առել։ Ինչ էր այնտեղի Ազգային Խորհրդի գործը։ Կառավարութիւնը յատկացրել էր վագոններ՝ փախստականութիւնը զանազան վայրեր փոխադրելու համար և Ազգային Խորհուրդը կազմակերպում էր այդ փախստականութիւնը, միայն թէ երբ Արմաւիրից հեռագիր էր ստացւում, թէ այլևս ոչ մի փախստական չուզարկէք, տեղական ժողովուրդը թոյլ չի տալիս վագոններից դուրս գալու և քաղաքում կամ ստանցիաներում ապաստանելու, Վլադիկաւկազի Ազգային Խորհուրդը աշխատում էր աւելի մեծ քանակութեամբ ուղարկել՝ իր գլխից ազատ անելու համար։ Նա իր գործելակերպով ճիշտ պատկերն էր կենտրոնի. ամեն կերպ աշխատում էր ազատուել իր համար աւելորդ այդ տարրից։

Մայիս և յունիս ամիսներին, երբ մենք անցանք Վլադիկաւկազ և այլուր, Հիւսիսային Կովկասի այդ շրջաններում բոլշևիկ կառավարութիւնը շատ կորրեկտ և բարեացակամ էր։ Մասնաւորապէս դէպի հայ փախստականութիւնը կառավարութեան վերաբերմունքը շատ լաւ էր։ Մինչդեռ տեղական ռուս ժողովուրդը վերաբերուում էր փախստականութեանը շատ սառն և ապառնալից։ Ամենուրեք «արմեաշկա» և «աւտոնոմիստ» ածականները հայհոյանքներով միասին նրանք շպրտում էին երեսներիս։ Իսկ աւելի ինտելիգենտ ռուս դասակարգը, բացի վերոյիշեալ ածականներից, ծաղրանքով աւելացնում էր. «Դուք ուզեցիք ինքնորոշումն, և ահաւասիկ ինքնորոշուեցիք»...

Թէ այստեղից գնացող Ազգային Խորհրդի ներկայացուցիչները՝ Լևոնեանով, թէ Հայաստանի Ապահովութեան Խորհրդի կազմը՝ Փափազեանով և թէ տեղական կոմիտէները եթէ քիչ հեռատեսութիւն ունենային, պէտք է տեղական ռուս ժողովրդի մէջ պրոպագանդ մղէին, փոխել տային նրա թիւր կարծիքը հայերիս վերաբերմամբ և այդպիսով տանելի կեանք ստեղծէին փախստականութեան և տեղացի ժողովրդի մէջ, որ ապագայ խոչընդոտները չը ծագէին, սակայն այդ «ազգայինները» բացի իզուր ռոճիկ ստանալուց և Զբերում հանգստանալուց՝ ոչինչ չարին և վերջն էլ նրանցից ոմանք մեկնեցին Պարիզ, ազգի բաղդը տնօրինելու...

Փախստականութիւնը կենտրոնացաւ Մոզդոկ, Պրոխլադնայա, Գէորգևսկ, Սուքբ Խաչ, Վլադիմիրովնայա, Հանքային Զբեր կայարանում, Արմաւիր, Ստաւրոպոլ, Բէլորեչինսկ, Մայկոպ, Կաւկազսկայա, Եկատերինոդար և այն բոլոր ստանցիաները և անկիւնները, ուր կարող էր պատսպարուել։

Անկանոն և անկազմակերպ փոխադրութեան պատճառով Վլադիկաւկազից այլուր գնացող փախստականական հոսանքը յաճախ թալանի ենթարկուեց Դար-կոխ և Բեսլան կայարանների միջև ինգուշներից և այդպէս անապահով ու ընչազուրկ՝ տարածուեց Հիւսիսային Կովկասի անկիւնները։

Անդրկովկասում և մասնաւորապէս Թիֆլիսում մինչ այդ գործող բոլշևիկ հայերը Գրիգոր Վարդանեանի և Գուրգէն Հայկունու հետ միասին անցել էին Վլադիկաւկազ և օրնիբուն ժողովներ գումարելով՝ ծրագրեր էին պատրաստում ներկայանալու Թերեքի և Կուբանի կառավարութեան իբրև հայ փախստականութեան միակ տէրն ու ներկայացուցիչ։ Եւ այն բոլորին, երբ խեղճ փախստականութիւնը հեծում էր անտրոշութեան մէջ, երբ ստանցիաներից տեղացի ժողովուրդը նրան դուրս էր շպրտում, այդ իսկ բոլշևիկները մի բան էին մտածում—որքան կարելի է լաւ պաշտօն և չաղ առճիկ ձեռք բերել»։

Նրանք հասան իրենց նպատակին։ Ներսիսեան գաղրոցի և Ճեմարանի աշակերտները ու իրենց վարժապետները Վլադիկաւկազում կոմիսարների պաշտօններում մըկրտուեցին և ամենքը մի քաղաք դիմեցին բոլշևիզմի վարդապետութիւնը քարոզելու հայ փախստականութեան մէջ և մանաւանդ «անշնորհք» ռուս բոլշևիկներին զարմացնելու իրենց «շնորհքով»։

Եւ այսպէս, Թիֆլիսից փախստականական գործով գնացող պարոնները, անցան Զբերում հանգստանալու, իսկ բոլշևիզմի տենդով բռնուած մի խումբ տաքարիւն և անփորձ աշակերտներ՝ անցան պաշտօնների հայ փախստականութիւնն ունենալով իբրև նիւթ։

Անցաւ մայիսը, նոյնպէս յունիս ամիսը։ Հայ «գործիչները» հայ ազգի անունից ճառեր են խօսում և Վլադիկաւկազից մինչև Եկատերինոդար պատասխանատու պաշտօնների գլուխը անցած՝ ամբոխը քարշ են տալիս իրենց մաքի ետևից։ Սակայն հայ փախստականութիւնը տակաւին թափթփուած է զանազան կայարաններում բացօթեայ, քիչ տեղերում վագոնների մէջ, որովհետև ռուս ժողովուրդը չի ընդունում նրան։

Յակ. Տեր-Յարութիւնեան

(Շարունակելի)

ՓՈՔՐԻԿ ՓԵԼԻԷՏՈՆ

ASINOMANIA

Նիգկայ տխուր ժամանակներում մարդու սիրտը մի քիչ զուարճանում է, երբ նրան պատահմամբ յաջողւում է կարդալ «Աշխատաւորի» աշակերտական, անոգ հրապարակախօսական փորձերը՝ ինչպէս ասում են՝ էշը ցեխից հանելու համար... Խեղճ լրագիրը, որ կատարելապէս խայտառակութեան մէջ է ընկել պ. Ղուլեանի մասին իր անիրաւ դրպարտութիւնը տպելով, չգիտէ թէ ինչ կերպ դուրս գայ անյաջող ու աննպատակ դրութիւնից և միամիտ, երեխայական մտքեր է արտայայտում զէթ արտաքուստ իր վարմունքը արդարացնելու համար։ Բայց, ոհ, ինչ թոյլ և խղճուկ են զրպարտիչների բոլոր ջանքերը։ Օրինակներ էք ուզում, ընթերցող։ Հաւեցէք. պ. Ղուլեանը, ինչպէս յայտնի է, զրպարտողներին հրաւիրեց միջնորդ դատարանի։ «Աշխատաւոր»-ի քաջ ասպետ հրապարակախօսները՝ ինչ ասել կուզէ՝ խայտառակ կերպով խուսափեցին այդ դատից։ բայց դիտէք, թէ ինչ են գրում նրանք իրենց թերթում։ Զէ՞ որ անյարմար է ազնիւ մարդու համար խուսափել միջնորդ դատից, և ահա «Աշխատաւորի» «ազնիւ» հրապարակախօսները, թերթի № 63-ում գրում են պ. Ղուլեանի առաջարկի մասին հետևեալը՝ «Այդ (ընդգծումը իմն է)—առաջարկը խմբագրութիւնն ընդունեց—(դուք զարմանում էք, ընթերցող...)—և պատրաստութիւն յայտնեց ոչ թէ «միջնորդ», այլ Հայաստանի պետական դատարանի առաջ երևան հանել և ապացուցել».—Տեսնում էք, ինչ երևելի խելքի տէրեր են այդ պարոնները։ Նրանք ընդունեցին «այդ» առաջարկը, այսինքն միջնորդ դատը, բայց միևնոյն ժամանակ չընդունեցին «միջնորդ» դատը և, հրաւիրելով պ. Ղուլեանին կանգ առնել այն ճանապարհի վրայ, որն, ինչպէս այդ ամենքը գիտեն, միանգամայն անգործադրելի է ձևական պատճառների շնորհիւ,— «Աշխատաւորի» զրպարտիչները յանդգնութիւն ունեն շեշտելու, որ նրանք «այդ առաջարկն ընդունեցին»... Ահա, ձեզ, ընթերցող, դաշնակցական սոֆիստիկայի փայլուն օրինակը։ Այդ սոֆիստիկան այնքան թոյլ է, որ արժանի էլ չէ առանձին հերքումի։ Դժբաղդաբար մեր կեղծ «Աշխատաւորի» համար ներկայ ժամանակում իսկական աշխատաւորները այնքան զարգացել են, որ դաշնակցական լրագրում ընդունուած ձևերով նրանց այլևս խաբելն անկարելի է... Անցաւ և, յոյս ունենք, որ վերադառնալու էլ չէ այն ժամանակը, երբ աշխատաւորները «Աշխատաւորի» նման թերթերի ամեն մի բառը դրեթէ մի սուրբ օրէնք էին համարում, և ահա ժողովրդի այդ զարգացման մէջն է կայանում դաշնակցականների ներկայ ողբերգութիւնը...

«Աշխատաւոր»-ի յօդուածը վերջանում է լատինական առածով (համաձայ կրթուած մարդիկ են—«Աշխատաւոր»-ի հրապարակախօսները)... Asinus asinum fricat... Իհարկէ, մեզ ամենին չի զարմացնում լրագրի գեղեցիկ և կոկ ոճը... յօդուածի խեղճ հեղինակը, կորցնելով իր ոտքերի տակի հողը, իր խեղճ ու կրակ գլուխն էլ է կորցրել և շատ է յուզուել, իսկ յուզուած մարդուն յատուկ է խօսել այն լեզուով, որին նա սովոր է իր մանկութեան քնքոյշ օրերից։ Յուզուած մարդը սկսում դէն է շպրտում իր բարեկրթութեան դիմակը և արտայայտում է այնպէս, ինչպէս սովոր է արտայայտուել, երբ մենակ է մնում տեսնեակում։

Գոնէ եթէ այդպէս էի բացատրում «Աշխատաւորի» կրթական ճանապարհորդութիւնը դէպի Հոմէական հին առածները... բայց երբ լրագրի յաջորդ համարում հեղինակը նորից յիշեց asinus-ի մասին, ես հասկացայ, որ այդ երևոյթին կարելի է տալ նաև ուրիշ, աւելի ճիշտ բացատրութիւն. երբ մարդը յուզուած է, նա յիշում է իր ամենամօտիկ բարեկամին...

Piccolo

ՎՐԱՑ ԹԵՐԹԵՐԻՑ

«Էրթոբան» (№ 74) «Վրաստանը և նրա հարևանները» վերնագրով տպել է հետևեալ առաջնորդողը.

«Զափղանց ուշադրաւ քայլ է դրել Ղուբանի առանձնայատուկ Խորհուրդը (Ռադա)։ Նա որոշել է՝ ամեն միջոցի դիմել, որպէսզի իրագործուի խորհրդի որոշումն—միացնել ֆեդերատիւ հիմունքներով հարաւային տէրութիւնները։ Այս բանն ի կատար ածելու համար Խորհուրդը պարտաւորեցնում է կառավարութեան՝ շտապ և մարտ ամսից ոչ ուշ հրաւիրել Եկատերինոդար քաղաքում կոնֆերէնցիա՝ Դոնի, Ղուբանի, Թերեքի, Դաղըստանցի, Դրիմի, Վրաստանցի, Հայաստանցի, Ադրբէջանցի և այլն ներկայացուցիչներից դաշնակցական սահմանադրութիւն (կոնստիտուցիա) մշակելու և ընդունելու։

Միևնոյն ժամանակ Խորհուրդը հարկաւոր է համարում կոիւ մղել ինչպէս բոլշևիկների, այնպէս էլ միապետականների դէմ։

Ղուբանի Խորհրդի որոշումը չափազանց ուշադրութեան արժանի է։ Փոքր տէրութեան գոյութիւնը դժուար է ինչպէս տնտեսական, այնպէս էլ քաղաքական կողմից։

Ուրեմն դրացիական կապ հաստատել նրանց հետ, որոնք օբեկտիւ պայմանների պատճառով կարող են մեզ հետ խօսելու ընդհանուր լեզու գտնել, շատ շահեկան և անխուսափելի է։ Այսպիսի մի տէրութիւն է ամեն մի դեկոկրատիական միութիւն, որը հարևան է մեզ։

Բայց, ցաւօք սրտի պիտի ասել, որ այսօր այսպիսի միջազգային եռուզեռի ժամանակ, Ղուբանի Խորհրդի որոշումն՝ դաշնակցական կոնստիտուցիա մշակելուն և ընդունելուն վերաբերեալ միայն տեսական դատողութիւնների և առանձին ցանկութիւնների շրջանում կը մնայ։

Դաշնակցական կոնստիտուցիա ընդունելու համար, որ ֆեդերատիւ պետութիւն հիմնուի, հարկաւոր են միատեսակ պայմաններ, որոնք իր ժամանակ նպաստեցին Հիւսիսային Ամերիկայի նախկին անգլիական գաղութներից կազմել Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները (շտատները)։ Այսպիսի պայմաններ, դժբախտաբար, մեզ մօտ դեռ չկան։ Ղուբանին դեռևս շրջապատում է Դենիկինը, Դոնին ոտնատակ են բոլշևիկները, Ադրբէջանը դեռ ևս եռագոյնում է մեծ Տաճկաստանի մասին, միայն Հայաստանն է, որ դեռ բոլորովին չի անկախացել Ռուսաստանի «սիրուց», սակայն չնայած սրան, մենք կարծում ենք, որ Ղուբանի Խորհրդի առաջարկութիւնը ուրախութեամբ պիտի ողջունեն բոլոր նրանք, ովքեր դեմոկրատիայի բախտով են հետաքրքրուած։ Ճշմարիտ է առայժմ կարելի է գործնականապէս միանալ «գիպուածից դիպուած», բայց այս ճանապարհով հող կը պատրաստուի հետեւեալ քայլի համար, երբ խաղաղարար կոնֆերենցիայի վճիռն էլ ընդունուած կը լինի և մեր անկախութիւնն էլ պաշտօնական երաշխիքներով էլ ապահովուած։ Այսօր միայն կարելի է այնպիսի դրացիական յարաբերութիւններ մշակել, որ տնտեսական փոխյարաբերութիւնները և ճանապարհների հաղորդակցութիւնները հեշտանան, բոլոր այս միութիւնների կուլտուրական-քաղաքական կեանքը միմեանց մօտենայ։ Եւ երբ ամեն տեղ կը յաղթէ դեմոկրատիական, ժողովրդապետական գաղափարը և կը չքանայ իր հարևանին տիրապետելու, նեղելու, հարստահարելու տենչը, միայն այն ժամանակ հաստատ, կայուն հիմք կը դրուի անձուկ դաշնադրութեան ֆեդերացիայի կամ կոնֆեդերացիայի ձևով։

Ցամենայն դէպս Ղուբանի առաջարկութիւնը մենք մեծ ուշադրութեան արժանի և օգտակար ենք համարում։ Եթէ լոկ մտքերի փոխանակութեամբ էլ վերջանայ այս կոնֆերենցիան, նա այնուամենայնիւ կը նպաստէ այս ժողովրդների միմեանց մերձենալու գործին, փոխադարձ ձգտումները հասկանալուն և ընդհանուր լեզու և ընդհանուր շահեր տեսնելուն։

ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, մարտի 30-ին, առաւօտեան ժամը 9-ին, Յովնանեան դպրոցի դահլիճում կայացաւ Մանկավարժական Խմբակի (Ներսիսեան, Յովնանեան, Գայիանեան դպրոցների VII և VIII դաս. աշակ. ու ուսուցիչների, վարժուհիների կազմակերպութիւն) ընդհանուր ժողովը։

Օրակարգի հարցերն էին.—ա) Զեկուցումն հին վարչութեան. բ) Նոր վարչութեան ընտրութիւն. գ) Ընթացիկ հարցեր։ Իր զեկուցման մէջ վարչութեան ներկայացուցիչը շեշտեց, որ Խմբակի արտաքին կեանքի նկատմամբ վարչութիւնն աշխատել է օգտագործել այն բոլոր ոյժերն ու միջոցները, որոնք կարող կը լինէին այս կամ այն կերպ նպաստել Խմբակիս նպատակի իրագործմանը։ Այդ առթիւ դիմումներ են եղել Ներսիսեան, Յովնանեան և Գայիանեան դպրոցների Մանկավարժական Խորհրդներին, տեղեկացնելով նրանց մեր գործունէութեան մասին, միաժամանակ խնդրելով նրանց աջակցութիւնն ու մասնակցութիւնը Խմբակի աշխատանքներին, ապա ստորին դասարանների աշակերտութիւնը և դպրոցների գրադարանների մանկավարժական դրքերը դնեն Խմբակի տրամադրութեան տակ։ Պատասխան դեռ ստացուել է Ներսիսեան և Գայիանեան դպրոցների Մանկավարժական Խորհուրդներից, որոնք ուրախութեամբ ընդառաջ են գնացել մեր երեք խնդիրներին։ Ապա դիմում է եղել մեր մանկավարժներին (պ. պ. Էդիլեան, Տ. Մարգարեան, Յ. Տէր-Միրաքեան, Ս. Լիսիցեան, բժ. Վ. Մարգարեան), որպէս զի մանկավարժութեան որևէ մասի վերաբերեալ սիստեմատիք դասախօսութիւններ կարդան։ Նրանք ևս համակրանքով ընդառաջ են գնացել մեր դիմումին։ Ներքին կեանքում որոշ սիստեմի է վերածուել գործավարութիւնը (քարտուղարութիւն, գրադարանապետութիւն, գանձապահութիւն)։ Այդ կարգի բարեփոխումներից է նաև Խմբակի կանոնադրութեան (վարչութեան մշակած) հաստատումը, որով վերջնականապէս պարզուեց Խմբակի բնոյթն ու գործունէութեան ուղին և վարչութիւնն հասաւ իր կէտ նպատակկէտին, այն է՝ Խմբակիս աշխատանքներին տալ praktikum, մասնագիտական դասընթացքներ։ Եւ իրօք, կիրակի օրերը տեղի էին ունենում սիստեմատիք դասախօսութիւններ (թէօրիա), իսկ շաբաթուայ ընթացքում ռեֆերատներ, փորձնական դասեր ու քննադատութիւններ (պրակտիկա)։ Իր ամիս ու կէսուայ գործունէութեան ընթացքում վարչութիւնը կազմակերպել է վեց դասախօսութիւն (յիշեալ մանկավարժների կարդացած), մի ռեֆերատ, 4 փորձնական դաս ու քննադատութիւն և երկու շրջագայութիւն, Ներսիսեան, Յովնանեան և Գայիանեան դպրոցների ստորին դասարանների համար։ Վերջում զեկուցողը վարչութեան կողմից երախտագիտութեան զգացում և շնորհակալութիւն յայտնեց Խմբակի հիմնադիրներից՝ պ. պ. Տ. Մարգարեանին և Գ. Էդիլեանին այն սիրալիր ու անկեղծ աջակցութեան համար, որ հանդէս են բերել վարչութեանս օրով յիշեալ մանկավարժները։

Լսելով վարչութեան զեկուցումը, ընդհ. ժողովը իր հաւանութիւնը տուեց վարչութեան գործունէութեան և վերընտրեց 3 ամիս ժամանակով։ Վերջում ցանկութիւն յայտնուեց համապատասխան միջոցներ ձեռք առնուեն, որ մեր հայկական միջնակարգ դպրոցների ուսուցչութիւնը անսարքեր դէրք չբռնէ դէպի այս անպատճառ խրախուսիչ նպատակին ձգտող կազմակերպութիւնը, իր լայն ժամանակութիւնն ունենայ և այդպիսով Խմբակը լինի այն օղակը, որը միացնէ ուսուցչութիւնն ու աշակերտութիւնը։

Ժողովից յետոյ եղաւ հերթական դասախօսութիւն. խօսեց բժ. Վ. Մարգարեանը «Ֆիզիքական կրթութիւնը» նիւթի մասին։

Քարտուղար՝ Ա.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏ.

ԿՐՈՒԺՈՒԿԻ ԹԱՏՐՈՆ

Բանուորական Դրամատիկ Խմբակցութեան ներկայացումներ։ «Ժայռ» Վրթ. Փափազեանի

Զորեքշաբթի, ապրիլի 2-ին, Բանուորների Դրամատիկ Խմբակցութիւնը ներկայացրեց Վ. Փափազեանի «Ժայռ» պիէսը, 4 գործողութեամբ։ Պէտք է ասել, որ յիշեալ Խմբակցութեան ընդունած repertoireը կատարելապէս համապատասխանում է իրենց յատուկ ուղղութեան, որը, ինքնըստինքեան ուրախալի է և յոյժ գովելի։

Գալով դերակատարների սահուն խաղին, ուրախութեամբ պիտի շեշտենք, որ ուշի-ուշով տեսնելով վերջիններիս ցուցադրած առանձին-առանձին դերերը, անպայման հոգեկան բաւականութիւն ենք ստանում։ Մենք համոզուած ենք, որ դրանց ապագայի յաջողութիւնն անհերքելի է, եթէ միայն սկսած եռանդով շարունակեն այդ շատ ցանկալի գործը։ Մանաւանդ այդ երեկոյ գերազանցօրէն աչքի ընկաւ իր մտածուած ու յաջող խաղով պ. Յարութիւնեան II (Բաղդասար ամի), նոյնպէս լաւ էր տ. Զարէլը Հոռոմսիմի դերում։ Սահակ աղայի դերում պ. Օհանեանը թոյլ էր. միանգամայն անյաջող էր և բնաւ իր շրջանակի մէջ չէր պ. Մարութեանը (Աղէքսանդր). սրան պակասում էր նրբութեան թափը, կոպիտ էր և սիրոյ տեսարանի մէջ։ Պր. Ռուսեանը երբէք Մատուէյ Եգորիչ չէր, որովհետև դանդաղ էր և սառն. այն ինչ բոլորովին հակառակն էր պէտք։ Տիկ. Խարաղեանը Թերեզայի դերում շատ բնական էր ու անկեղծ. երևում է, որ տիկնոջ մէջ էւոլիւցիան տեղ [illegible] տրեանց [illegible] եթէ [illegible] դերեանի Գրիգոր աղան լաւ էր ըմբռնուած, բայց խօսելու համար զգալի չափով բարձր տոն էր ընդունել։

Գիւղացիները բաւարար էին։ Դահլիճը կիսով չափ լիքն էր։

Վ. Ս.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վարչութիւնս խնդրում է յարգելի խմբագրութիւնից տպագրել «Ժողովրդի Ձայն» թերթի առաջիկայ համարում հետևեալը.

Ախալցխայի բնակիչ պ. Կարապետ Մարութեանը, իր վաղամեռիկ որդու՝ Մամիկոնի յիշատակին նուիրել է 2000 ռուբլի Կ. Հ. Բ. Ընկ. Ախալցխայի ճիւղի և նրա որբանոցի օգտին։ Բացի սրանից՝ խոստացել է, նոյն յիշատակին այս տարուայ սեպտեմբերից սկսած, վարչութեանս միջոցով վճարել տեղական Հայոց Կարապետեան դպրոցում սովորող երկու լաւագոյն աշակերտների թոշակավարձի և դասական պիտոյքների համար տարեկան 400 ռուբլի, որի առթիւ Վարչութիւնս սրանով յայտնում է նուիրատուին իր շնորհակալութիւնը։

Կ. Հ. Բ. Ընկ. Ախալցխայի ճիւղի վարչութեան նախագահ՝

Խ. Թեխմիշեանց

Քարտուղար՝

Ս. Տեր-Կարապետեան

ՍՏԱՑՈՒԱԾ ՆԱՄԱԿՆԵՐ

«Ժողովրդի Ձայն»-ի խմբագրատունը ստացուած են հետևեալ նամակները.

1) Нинѣ Ивановнѣ Арушановой և

2) Искуи Герасимовнѣ Карахановой.

Ստանալ կարելի է խմբագրատունը, ժամը 10-ից մինչև 2-ը։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Հրատարակիչ՝ Հայ Ժողովրդական Դուռակցութիւն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Երիտասարդ Դրաղների գրադարան

№ 2.

ՍՏ. ԶՕՐԵԱՆ

ՏԽՈՒՐ ՄԱՐԴԻԿ

(Պատմուածքներ)

Հատոր I.

Ն. ԱՂԲԱԼԵԱՆԻ քննականով և հեղինակի պատկերով։ Մօտ 200 էջ։ Շքեղ հրատարակութիւն։

Գինը 8 ռ.

Դիմել՝ Թիֆլիս, Լորիս-Մելիքեան փող., № 22, Մ. Էփրիկեանին։ 10—3

ԲԱՐԶՐԱԳՈՅՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Հայերի մէջ առևտրական կրթութիւն տարածող Կովկասեան ընկերութեան։

Նիկոլայևսկի № 36։

0—77 Տեսուչ՝ Գ. Կ. Տեր-Դաւթեան

„ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆ"-Ի

գ[illegible]ենակում վաճառում է նրա հրատարակութեամբ լոյս տեսած

ԳԷՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

ՋԵՄՍՏԻՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ԳԻՐՔԸ

Գինը 50 կոպեկ։

Դիմել գրասենեակ՝ Головинскій пр. № 41. 0—46

Տպարան «Մամուլ»—կապալ. Մ. Էփրիկեան և Յ. Մայիլեան։ Լորիս-Մելիքեան փող., № 22.